

սահմանափակ են եւ բարելավման կարիք ունեն, քանի որ ներկայումս Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում բաժնետիրական ընկերություններում կատարվող հայտարարագրման ենթակա խոշոր գործարքները:

Ներկայացվել է 08.11.2016թ.
Ընդունվել է տպագրության 30.12.2016թ.

1. Антимонопольное право Европейского Союза, Тухамер Том, Будапешт 2014, с. 21-34.
2. Նույն տեղում՝ էջ 34-43
3. Alison Jones and Brenda Sufrin, *EU Competition Law, texts, cases and materials, Fourth Edition, Oxford University Press, 2014, p. 4-12.*
4. John Braithwaite, *Regulatory Capitalism, How it Works, Ideas for Making it Work Better, Edward Elgar Publishing, 2008, p. 1-17, p. 131-140.*
5. Imelda Maher, *Competition Law in the International Domain: Networks as a New Form of Governance, Journal of Law and Society Vol. 29, No. 1, New Directions in Regulatory Theory, 2002, p. 111.*
6. *Advocacy and competition policy, International competition network, ICN's Conference, Naples, Italy, 2002, p. 44-45, http://www.internationalcompetition-network.org/uploads/library/doc358.pdf.*
7. Նույն տեղում, էջ 46
8. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18, www.arlis.am.
9. Abuse of dominance and monopolization, *Policy roundtables, Report, OECD, 1996, p. 9, http://www.oecd.org/daf/competition/abuse/2379408.pdf.*
10. Promoting compliance with competition law, *Policy Roundtables, Report, 2011, http://www.oecd.org/daf/competition/Promotingcompliancewithcompetitionlaw2011.pdf.*
11. *Ex officio cartel investigations and the use of screens to detect cartels, Policy Roundtables, OECD, Report, 2013, http://www.oecd.org/daf/competition/exofficio-cartel-investigation-2013.pdf.*
12. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, 2017 թվականի տարեկան գործունեության ծրագիր, Երևան 2016, էջ 12-14, 18-21
13. Douglas F. Broder, *U.S. Antitrust Law and Enforcement, A Practice Introduction, Oxford University Press, 2012, p. 2, p. 15.*
14. <https://www.ftc.gov/enforcement>, <https://www.justice.gov/atr/mission>.
15. Anestis S Papadopoulos, *The International Dimension of EU Competition Law and Policy, Cambridge University Press, 2010, p. 12-13.*
16. Ariel Ezrachi, *EU Competition Law, An Analytical Guide to the Leading Cases, Bloomsbury Publishing, 2014, p. 10.*
17. Alden F. Abbott, *A brief comparison of European and American antitrust law, The University of Oxford Centre for Competition Law and Policy, 2005, p. 4-10.*
18. Նույն տեղում:
19. *Competition, State Aid and Subsidies, Policy Roundtables, OECD, 2010, http://www.oecd.org/competition/sectors/48070736.pdf.*
20. European Parliamentary Research Center, *EU and US competition policies, Briefing, 2014, p. 3-10.*
21. *Communication from the commission to the European parliament, the council, the European economic and social committee and the committee of the regions, Guidance on the implementation/application of directive 2005/29/EC on Unfair commercial practices, Brussels, {COM(2016) 320}, European Commission: http://ec.europa.eu/consumers/consumer_rights/unfair-trade/unfair-practices/index_en.htm.*
22. Directorate general for internal policies, *Policy departament A, Economic and scientific policy, State of play of the implementation of the provisions on advertising in the unfair commercial practices legislation, EU Parliament documents, IP/A/IMCO/ST/2010-04 July 2010, p. 15-17.*
23. European Commission – DG Justice Study on the application of Directive 2005/29/EC on Unfair Commercial Practices in the EU Part 1 - Synthesis Report Final Report, 2011, p. 33-35; http://ec.europa.eu/justice/consumer-marketing/files/ucpd_final_report_part_1_synthesis.pdf.
24. Federal Trade Commission/Enforcement Authority <https://www.ftc.gov/about-ftc/what-we-do/enforcement-authority>.
25. Artemev Yu. I., Sushkevich A. G, *KonkurentnoopravoRossii (Russian Competition Law), National Research University, High School of Economics, Moscow 2012, p. 8, http://fas.gov.ru/about/mission.html.*
26. Федеральный закон от 26.07.2006 N 135-ФЗ (ред. от 05.10.2015) «О защите конкуренции», <http://fas.gov.ru/documents/documentdetails.html?id=418>.
27. План мероприятия («дорожная карта») «Развитие конкуренции и совершенствование антимонопольной политики», http://economy.gov.ru/minec/activity/sections/competition/programconcur/doc20121228_011.

Բանալի բառեր՝

նիսկերի կառավարման համակարգ, նիսկերի ցուցակիչ, գործարար գործընթաց, վարկային նիսկ, տոկոսադրույքի նիսկ, արտարժութային նիսկ, իրացվելիության նիսկ:

Բանկային խմբի (այսուհետ՝ խումբ) նիսկերի կառավարման միասնական համակարգի¹² կազմի մեջ մտնող մեկ ֆինանսական կազմակերպությունների (այսուհետև՝ հՖԿ) էական նիսկերի ամբողջությունը համարվում է իբրև մեկ միասնական կառուցվածք, որը ներառում է.

- նիսկի բոլոր տեսակները,
- նիսկերի ինտեգրման բոլոր մակարդակները յուրաքանչյուր տեսակի համար:

Բանկային նիսկերի համակարգը ձևավորվում է բանկային նիսկերի աստիճանակարգման արդյունքում.

- տնտեսական նիսկերի դեպքում՝ ֆինանսական գործիքների մակարդակում.

- ոչ տնտեսական նիսկերի դեպքում՝ համապատասխան նիսկային գործոնների ստորին մակարդակում:

Ուսկերի աստիճանակարգման հաջորդ մակարդակներում բանկային նիսկերի միասնությունն ապահովվում է նիսկերի միավորման հայեցակարգի միջոցով: Ստորին մակարդակի նիսկերի միավորման շնորհիվ որոշվում է ավելի բարձր աստիճանակարգման մակարդակի նիսկերի ընդհանուր նիսկը:

Աստիճանակարգման տարբեր տեսակների եւ մակարդակների նիսկերի ազդեցացումն ավարտվում է աստիճանակարգման վերին մակարդակում, այն էլ համբի մակարդակում միագումար նիսկերի սահմանմամբ: Բանկային նիսկերի կոնկրետ կառուցվածքը որոշվում է հՖԿ-ներում կառավարման գործընթացների օպտիմալացման պահանջներին համապատասխան, որոնցից գլխավորը համարվում է նիսկերի կառուցվածքի ամբողջականության պահանջը:

Բանկային նիսկերի կառուցվածքի ամբողջականությունն ապահովում է նիսկերի կառուցվածքում ներառելով՝

- բանկային նիսկերի բոլոր տեսակները.
- նիսկերի ինտեգրման բոլոր կարելուրագույն մակարդակները՝ հՖԿ-ում գործող կառուցվածքների համապատասխան (բիզնեսի կառուցվածք, վարչակազմակերպական կառուցվածք, հՖԿ-ի դուստր եւ փոխկապակցված կազմակերպությունների կառուցվածք, տեղեկատվական կառուցվածք):

Նույն մեթոդաբանությունը կիրառում է բանկային նիսկերի ստորին ներկայացված դասակարգումը³⁴.

Ֆնոդային նիսկի սահմանափակումները պետք է սահմանվեն սահմանաչափերի (տրոմատիվների) տեսքով: Սահմանաչափման օբյեկտ են հանդիսանում հՖԿ-ի հաշվին եւ նրա անուկից արժեթղթերով ու ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման արդյունքում ձևավորված հՖԿ-ի բաց դիրքերն արժեթղթերում եւ ածանցյալ գործիքներում:

Արժեթղթերում եւ ածանցյալ գործիքներում բաց դիրքերի սահմանաչափերը որոշվում են՝ հաշվի առնելով համապատասխան արժեթղթերով ու ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման, ինչպես նաեւ արժեթղթերի եւ ածանցյալ գործիքների տեսակների եւ գործառնությունների կտրվածքով վարկային եւ շուկայական միագումար նիսկերի մեծությունը գնահատելու հՖԿ-ի պահանջները: Լրացուցիչ կարող են սահմանվել հատուկ սահմանափակումներ՝ պայմանավորված հՖԿ-ի բաց դիրքերի ձևավորմամբ եւ սահմանաչափերի օգտագործմամբ:

Սահմանաչափի սահմաններում գործառնություններ իրականացնելիս տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումն ինքնուրույն հետեւում է դրա կատարմանը գործառնական օրվա ընթացքում: Սահմանաչափի գերազանցման դեպքում տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումը նույն օրվա ընթացքում համապատասխան գործողություններ է ձեռնարկում խախտումը վերացնելու ուղղությամբ: Սահմանաչափերի կատարման հետագա վերահսկողությունը

Բանկային ռիսկերի դասակարգումը			
Տնտեսական ռիսկեր	Ֆինանսական ռիսկեր	Շուկայական ռիսկեր	Ֆոնդային ռիսկ
			Արտարժույթային ռիսկ
			Տոկոսադրույքի ռիսկ
			Իրացվելիության ռիսկ
			Վարկային ռիսկ
			Գործառնական ռիսկ
			Իրավական ռիսկ
			Հանքավի ռիսկ

պետք է իրականացվի համաձայն ԽՖԿ-ներում սահմանված կարգի եւ նորմատիվատեխնոլոգիական փաստաթղթերի: Միաժամանակ լրացուցիչ կարող են սահմանվել ֆոնդային ռիսկի ցուցանիշների արժեքների սահմանափակումներ ցուցանիշների կրիտիկական արժեքների տեսքով: Ֆոնդային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով ԽՖԿ-ները կարող են կիրառել հետևյալ մեթոդները.

- հաշվեկշռի վրա անմիջական ազդեցության միջոցներ,
- սահմանաչափերի սահմանում/փոփոխում,
- դիվերսիֆիկացում,
- հեջավորում:

Հաշվեկշռի վրա անմիջական ազդեցության միջոցներն իրականացվում են պորտֆելների ծավալների փոփոխման կամ ֆոնդային ռիսկի փոփոխմանն ուղղված հատուկ բանկային գործառնությունների իրականացման համար որոշումներ ընդունելու միջոցով: Սահմանաչափերի սահմանում կամ դրա փոփոխումը՝ ըստ գործիքների/պորտֆելների, կատարվում է նշված պորտֆելների ֆոնդային ռիսկի սահմանափակման (փոփոխման) անհրաժեշտության դեպքում: Դիվերսիֆիկացումն ու հեջավորումը կիրառվում են պորտֆելների ֆոնդային ռիսկի նվազեցման համար:

Արտարժույթային ռիսկի սահմանափակումները սահմանվում են սահմանաչափերի (նորմատիվների) տեսքով: ԽՖԿ-ներում արտարժույթային բաց դիրքերի չափը կարգավորվում է տվյալ երկրի ԿԲ-ի կողմից սահմանված ներբանկային սահմանաչափերի եւ նորմատիվների միջոցով: Սահմանաչափման օբյեկտ են հանդիսանում ԽՖԿ-ի հաշվին եւ նրա անունից արտարժույթով բանկային գործառնությունների իրականացման արդյունքում ձեռավորված ԽՖԿ-ի արտարժույթային բաց դիրքերը: Արտարժույթային բաց դիրքերի սահմանաչափերը որոշվում են՝ հաշվի առնելով համապատասխան արտարժույթով գործառնություններ իրականացնելու ԽՖԿ-ների պահանջները: Միաժամանակ՝ լրացուցիչ կարող են սահմանվել սահմանափակումներ արտարժույթային գործառնությունների առանձին կատեգորիաների համար՝ պայմանավորված բանկերի արտարժույթային բաց դիրքերի ձեռավորմամբ:

Սահմանաչափի սահմաններում գործառնություններ իրականացնելիս տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումն ինքնուրույն հետեւում է սահմանաչափի կատարմանը գործառնական օրվա ընթացքում: Սահմանաչափի գերազանցման դեպքում տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումը նույն օրվա ընթացքում համապատասխան գործողություններ պետք է ձեռնարկի խախտումը վերացնելու նպատակով: Կոլեգիալ մարմինների կողմից սահմանված սահմանաչափերի կատարման հետագա վերահսկողությունը պետք է իրականացվի ԽՖԿ-ում վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումների կողմից: Միևնույն ժամանակ լրացուցիչ կարող են սահմանվել արտարժույթային ռիսկի ցուցանիշների արժեքների սահմանափակումներ՝ ցուցանիշների կրիտիկական արժեքների տեսքով:

Տոկոսադրույքի ռիսկի սահմանափակումները որոշվում են սահմանաչափերի (նորմատիվների) տեսքով: Սահմանաչափման օբյեկտ են հանդիսանում ԽՖԿ-ի կողմից տոկոսադրույքի ռիսկի ենթարկված գործիքներով գործառնությունների արդյունքում ձեռավորված ԽՖԿ-ի բոլոր արժույթների GAP ճեղքվածքները: Վերջինների սահմանաչափերը որոշվում են՝ հաշվի առնելով համապատասխան գործիքներով գործառնություններ իրականացնելու ԽՖԿ-ների պահանջները: Լրացուցիչ կարող են սահմանվել սահմանափակումներ տոկոսագայուն գործիքներով՝ գործառնությունների առանձին տեսակների համար:

Սահմանաչափի սահմաններում գործառնություններ իրականացնելիս տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումը ինքնուրույն հետեւում է սահմանաչափի կատարմանը գործառնական օրվա ընթացքում: Սահմանաչափի գերազանցման դեպքում տվյալ սահմանաչափն օգտագործող ստորաբաժանումը նույն օրվա ընթացքում համապատասխան գործողություններ պետք է ձեռնարկի խախտումը վերացնելու ուղղությամբ: Կոլեգիալ մարմինների սահմանած սահմանաչափերի կատարման հետագա վերահսկողությունը պետք է իրականացվի ԽՖԿ-ներում վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումների կողմից: Դրա հետ մեկտեղ լրացուցիչ կարող են սահմանվել տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշների արժեքների սահմանափակումներ ցուցանիշների կրիտիկական արժեքների տեսքով:

Տոկոսադրույքի ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով ԽՖԿ-ները կարող են կիրառել հետևյալ մեթոդները.

- հաշվեկշռի վրա անմիջական ազդեցության միջոցներ,
- սահմանաչափերի սահմանում/փոփոխում,
- դիվերսիֆիկացում,

ԲԱՆԿԱՅԻՆ ԽՄԲԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

ՀՏԴ 336.71

**Հարություն
ԶԱՔՈՅԱՆ**
Տեխնիկական
գիտությունների
թեկնածու,
ԵՊՀ կառավարման եւ
գործարարության
ամբիոնի
դոցենտ

harutyunzakoyan@ysu.am

- հեջավորում,
- տոկոսային սվոպների կիրառում,
- ներգրավման/տեղաբաշխման ժամկետների փոփոխում:

Հաշվեկշռի վրա անմիջական ազդեցության միջոցները իրականացվում են պորտֆելների ծավալների փոփոխման կամ տոկոսադրույքի ռիսկի նվազեցմանն ուղղված որոշակի բանկային գործարքների միջոցով: Սահմանաչափերի սահմանումը (փոփոխումը) ըստ գործիքների/պորտֆելների կատարվում է նշված պորտֆելների տոկոսադրույքի ռիսկի սահմանափակման (փոփոխման) անհրաժեշտության դեպքում: Դիվերսիֆիկացումն ու հեջավորումը կիրառվում են պորտֆելների տոկոսադրույքի ռիսկը նվազեցնելու համար: Տոկոսային սվոպը կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի նվազեցման համար՝ ակտիվների և պարտավորությունների դրույքատեսակների համաձայնեցման միջոցով: Ներգրավման/տեղաբաշխման ժամկետների փոփոխումը կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի նվազեցման համար՝ ակտիվների և պարտավորությունների ժամկետները համաձայնեցնելու միջոցով:

Իրացվելիության ռիսկի սահմանափակումները որոշվում են սահմանաչափերի (նորմատիվների) տեսքով: Այդ սահմանափակումներին են հաճախ ընդհանուր իրացվելի ակտիվների պաշարների նորմատիվը, որը գնահատում է հաճախ ժամկետային (օրինակ՝ մինչև 1 ամիս) պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ իրացվելի ակտիվների ծավալը: Իրացվելիության բավարար աստիճանի գնահատման համար հաշվետու ամսաթվի դրությամբ իրացվելի ակտիվների պաշարի փաստացի արժեքը համեմատվում է նորմատիվ արժեքի հետ: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար GAP-ճեղքվածքների սահմանաչափերը որոշվում են կուտակված դրամական հոսքերի անհավասարակշռվածության հիման վրա՝ Իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով հաճախ ներդրվում են կիրառելի հետետեյալ մեթոդները:

- փաստացի և պլանավորվող գործառնությունների ժամկետների և ծավալների փոփոխում,
- հաշվեկշռի վերակազմավորում ըստ գործիքների,
- ֆորվարդային գործարքների կնքում,
- սահմանաչափերի/ կողմնորոշիչների գործակիցների սահմանում/փոփոխում:

Դրամական միջոցների ներգրավման/տեղաբաշխման ժամկետների փոփոխումը կիրառվում է իրացվելիության ռիսկի նվազեցման համար՝ ակտիվների և պարտավորությունների ժամկետների համաձայնեցմամբ: Հաշվեկշռի վերակազմավորումն ըստ գործիքների կիրառվում է ակտիվներն ու պասիվները ավելի իրացվելի (ակտիվների համար) կամ ավելի քիչ տատանողական (պասիվների համար) դարձնելու նպատակով: Ֆորվարդային գործարքների կնքումը կիրառվում է ապագայի որոշակի ժամանակահատվածի համար անհրաժեշտ դրամական միջոցների մուտքերը ապահովելու նպատակով: Իսկ սահմանաչափերի սահմանումը (փոփոխումը) կատարվում է հաճախ «ակտիվների և պասիվների կառավարման» կոմիտեների կողմից ընթացիկ իրացվելիության պահանջների բավարարման համար իրացվելիության ռիսկի նկատմամբ սահմանափակումների (փոփոխությունների) անհրաժեշտության դեպքում:

Վարկային ռիսկի ցուցանիշների մեծությունների սահմանափակումները որոշվում են ըստ հետետեյալ պահանջների.

- սահմանափակումները սահմանվում են որպես պորտֆելի կառուցվածքի սահմանաչափեր՝ հետետեյալ վերլուծական հատույթներով: Վարկային գործարքների ուղղություններ, կոնտրահենտների ճյուղայնություն, կոնտրահենտի հաճախորդային սեգմենտի տեսակ, կոնտրահենտի ներքին վարկային վարկանիշներ, ֆիզիկական անձ հանդիսացող վարկառուների խմբեր, ֆիզիկական անձանց վարկավորման ծրագրեր,
- առանձին կոնտրահենտների/փոխկապակցված կոնտրահենտների խմբերի գծով անհատական սահմանաչափեր,
- վարկային գործարքների յուրաքանչյուր ուղղությամբ խնդրահարույց պարտավորության առավելագույն թույլատրելի մակարդակ:

Վարկային գործառնությունների սահմանաչափերը կարող են սահմանվել ինչպես բացարձակ մեծության, այնպես էլ հաճախ ներդրվում են ակտիվներից ստացված տոկոսների

րի հիման վրա:

Վարկային ռիսկի⁵ արդյունավետ կառավարման նպատակով հաճախ ներդրվում են կիրառելի հետետեյալ մեթոդները.

- ռիսկի մակարդակի նվազեցում,
- պահուստների ստեղծում՝ վարկային ռիսկից հնարավոր կորուստների առաջացման դեպքում,
- վարկերի մոնիթորինգ և կառավարում:

Վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով կարող է իրականացվել վարկի ապահովում (գրավ, երաշխիքներ, երաշխավորություններ), արժեթղթավորում, վարկային ռիսկի ապահովագրում: Պահուստները ստեղծվում են տվյալ երկրի ԿԲ-ի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ակտիվի դասակարգման արդյունքներով վարկային ռիսկի մեծությունը և դրա հաստատումը ռիսկի որդեկապետգործի համար:

Ակտիվների դասակարգումն ըստ ռիսկերի խմբերի, պահուստների տվյալների գնահատման և ձեռավորման, ինչպես նաև դրանց արտացոլումը ֆինանսական ու վերլուծական հաշվառման մեջ պետք է նկարագրվի հաճախ գործող «Վարկերի և դեբիտորական պարտքերի (ակտիվների) դասակարգման ու հնարավոր կորուստների պահուստների ձեռավորման» հրահանգներով:

Վարկային ռիսկի մոնիթորինգն իրենից ներկայացնում է վարկի և փոխառուի վերահսկման համակարգ՝ վարկի տրամադրման ու ամբողջությամբ վերադարձման, տոկոսների և միջնորդավճարների վճարման համար սահմանված ժամանակահատվածի համար, որի նպատակն է ժամանակին բացահայտել փոփոխությունները, գնահատել, ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ և վերացնել բացասական գործընթացների հետեւանքները: Մոնիթորինգի հիմնական գործընթացները պետք է ներկայացված լինեն հաճախ գործող «Վարկերի մոնիթորինգի իրականացման հրահանգներով»:

Վարկային ռիսկերի տրված մակարդակի ապահովմանն ուղղված վարկային պորտֆելի վերակազմավորումն իրականացվում է ինչպես միանվագ (ցածր վարկանիշով առկա փոխառուների արժեթղթավորում), այնպես էլ ըստ վարկավորման ժամկետների ավարտի՝ փոխառուների փոփոխման երկարաժամկետ ռազմավարության իրականացման արդյունքում:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգի զարգացման ընթացիկ փուլում որպես գործառնական ռիսկի սահմանափակումներ հաճախ ներդրվում են գործառնական ռիսկի կառավարման սկզբունքներ, որոնք կիրառվում են բիզնես-որոշումների ընդունման, ինչպես նաև կատարվում են անկանխատեսելի (ֆորս-մաժորային) իրավիճակներում հաճախ ներդրվում են գործունեությունն ապահովելու աշխատանքների իրականացման համար: Հաճախ գործառնական ռիսկերի կառավարման սկզբունքները հիմնվում են բանկային վերահսկողության բազային կոմիտեի դրույթների վրա՝ հաշվի առնելով գործառնական ռիսկի կառավարման ազգային և համաշխարհային բանկային փորձը: Անխափան գործունեության ապահովումը կազմակերպչական, տեխնիկական և ծրագրային միջոցառումները հիմնվում են ուղղված չպլանավորված իրավիճակներում հաճախ կորուստների նվազեցմանը, որոնք կարող են հանգեցնել տեղեկատվական համակարգերի, գործարար գործընթացների աշխատանքների դաճեցմանը, ազդել անձնակազմի աշխատանքի վրա:

Հաճախ գործառնական գործունեության խափանումների բացասական հետեւանքները նվազեցնելու նպատակով պետք է կիրառվեն հետետեյալ միջոցները.

- տեղեկատվական համակարգերի տվյալների արդյունավետ պահեստավորում,
- տեղեկատվական համակարգերի օպերատիվ վերականգնման պլանավորում,
- ստորաբաժանումների, տեղեկատվական համակարգերի և գործարար գործընթացների աշխատանքների ինքնավարության ապահովում, գործառնական ռիսկերի վերահսկում և գնահատում,
- գործարար գործընթացների կանոնավոր գործունեության խափանման դեպքում՝ առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության օպերատիվ արձագանքման և վերականգնման պլանավորում:

Չպլանավորված իրավիճակներում և խափանումների հետեւանքով աշխատանքների համաձայնեցված օպերատիվ

արձագանքման ու արագ վերականգնման համար ԽՖԿ-ներում սահմանված կարգով պետք է մշակվեն եւ հաստատվեն արտակարգ, արտահաստիքային ու վթարային իրավիճակների աշխատանքային պլաններ (յուրաքանչյուր դեպքի համար առանձին պլան), որոնք, որպես կանոն, մշակվում են իրացվելիության ցածր հավանականություն եւ ծանր հետեւանքներ ունեցող ռիսկային իրադարձությունների համար: ԽՖԿ-ներում նոր գործարար գործընթացների ներդրումը պետք է իրականացվի միայն արտակարգ, արտահաստիքային եւ վթարային իրավիճակների աշխատանքային պլանների վերլուծությունից հետո՝ ներդրվող գործարար գործընթացի կամ տվյալ պլանների արդիականացման ժամանակ նշված իրավիճակների առաջացման ռիսկի ծածկման նպատակով:

Գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով ԽՖԿ-ները կարող են կիրառել հետեւյալ մեթոդները.

- գործառնական ռիսկի իրացումից առաջացած անբարենպաստ ֆինանսական հետեւանքների փոխանցումը կողմնակի անձանց՝ գործառնական ռիսկի ապահովագրման կամ աութսորսինգի միջոցով,
- գործառնական ռիսկի ընդունման հիմնավորվածություն,
- գործառնական ռիսկ կրող գործունեությունից հրաժարում,
- գործառնական ռիսկի նվազեցում (մինչեւ ԽՖԿ-ների համար ընդունելի մակարդակ):

Գործառնական ռիսկի իրացումից առաջացած անբարենպաստ ֆինանսական հետեւանքների փոխանցումը կողմնակի անձանց ենթադրում է գործառնական ռիսկի իրացումից առաջացած հնարավոր բացասական հետեւանքների ամբողջական կամ մասնակի փոխանցում կողմնակի անձի, ով կարող է եւ պատրաստ է կրել դրանք: Գործառնական ռիսկի փոխանցումը պետք է իրականացվի այն դեպքում, երբ անհնար է խուսափել գործառնական ռիսկից, եւ միաժամանակ՝ ռիսկի ընդունումը ընդունելի չէ, իսկ ԽՖԿ-ների կողմից ռիսկի նվազեցման սեփական միջոցառումների իրագործումը տնտեսապես հիմնավորված չէ: ԽՖԿ-ներում ռիսկի փոխանցման հիմնական միջոց է համարվում գործառնական ռիսկի ապահովագրումը եւ/կամ ռիսկի օբյեկտների փոխանցումը կողմնակի անձանց, ինչպիսիք են գործարար գործընթացները, տեղեկատվական ակտիվները եւ այլն:

Գործառնական ռիսկի ընդունումը պետք է իրականացվի այն դեպքում, երբ դրա նվազեցմանն ուղղված միջոցառումները տնտեսապես հիմնավորված չեն, այսինքն՝ երբ գործառնական ռիսկի նվազեցման միջոցառումների արժեքը, ներառյալ դրա վերահսկման գործընթացների արժեքը, գերազանցում է բացահայտված ռիսկի հետեւանքով ԽՖԿ-ների հնարավոր կորուստների մեծությունը: Ընդ որում այդ մեծությունը չպետք է լինի կրիտիկական եւ չպետք է հանգեցնի բացահայտված ռիսկը կրող գործունեության տնտեսական նպատակահարմարության կորստի: Գործառնական ռիսկի ընդունումը կարող է իրականացվել հետեւյալ կերպ. գործարքների, գործարար գործընթացների եւ գործարար ուղղությունների փաստաթղթավորում, այդ թվում՝ նորմատիվատեխնոլոգիական փաստաթղթերով. ներքին նորմատիվային փաստաթղթերի հրատարակման եւ կոլեգիալ մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից գործառնական ռիսկերի առնչությամբ որոշումներ ընդունելու միջոցով:

Գործառնական ռիսկ կրող գործունեության տեսակից հրաժարումը իրականացվում է այն դեպքում, երբ բացահայտված ռիսկի հետեւանքով ԽՖԿ-ի հնարավոր կորուստների մեծությունը կրիտիկական է եւ/կամ հանգեցնում է բացահայտված ռիսկը կրող գործունեության տնտեսական նպատակահարմարության կորստի, ընդ որում՝ դրա նվազեցմանն ուղղված միջոցառումները տնտեսապես հիմնավորված չեն, այն է՝ գործառնական ռիսկի նվազեցման միջոցառումների արժեքը, ներառյալ դրա վերահսկման գործընթացների արժեքը, երբ այն գերազանցում է բացահայտված ռիսկի հետեւանքով ԽՖԿ-ի հնարավոր կորուստների մեծությունը: Գործառնական ռիսկ կրող գործունեությունից հրաժարումը կարող է իրականացվել ներքին նորմատիվային փաստաթղթերի հրատարակման, կոլեգիալ մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից որոշումների ընդունման միջոցով:

Գործառնական ռիսկի նվազեցումն իրականացվում է այն դեպքում, երբ այդ ռիսկի նվազեցման միջոցների արժեքը, նե-

րառյալ դրա վերահսկման գործընթացների արժեքը, փոքր է բացահայտված ռիսկի հետեւանքով ԽՖԿ-ների հնարավոր կորուստների մեծությունից: Գործառնական ռիսկի կառավարման տվյալ մեթոդը կարող է ներառել հայեցակետեր՝ ուղղված այդ ռիսկի իրականացումից բխող կորուստների հավանականության նվազեցմանը եւ/կամ գործառնական ռիսկի իրականացման արդյունքում ԽՖԿ-ների կրած հետեւանքների ծանրության աստիճանի նվազեցմանը եւ բացասական հետեւանքների փոփոխմանը: Գործառնական ռիսկի նվազեցման համար ԽՖԿ-ները պետք է կիրառեն վերը նշված գործառնական ռիսկի կառավարման սկզբունքները եւ միաժամանակ՝ այդ ռիսկի նվազեցումը կարող է իրականացվել ներքին նորմատիվային փաստաթղթերի հրատարակման, կոլեգիալ մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից որոշումների ընդունման միջոցով:

*Ներկայացվել է 03.12.2016թ.
Ընդունվել է տպագրության 30.12.2016թ.*

1. *Ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Հայաստանի բանկերի միություն, 2012*
2. *Банковский менеджмент, Учебник, коллектив авторов: под ред. д-ра экон. Наук, проф. О.И. Лаврушина, М.: КНОРУС, 2011, -560 с.*
3. *Банковские риски, Учебник, коллектив авторов, Под ред. О.И. Лаврушина, Н.И. Валенцевой, 3-ое изд., перераб. и доп, М. КНОРУС, 2013- 296 с.*
4. *Риск менеджмент в коммерческом банке: монография, коллектив авторов; Под ред. И. В. Ларионовой, М. КНОРУС, 2014, 456 с.*
5. *Энциклопедия финансового риск-менеджмента, Под ред. А.А. Лобанова и А.В. Чугунова, 3-е изд., М. : Альпина Бизнес Букс, 2007-878 с.*